

մը, աչքէ ու սրտէ հեռուութիւնը, որ մեր մանկութիւնն էր մեր ետին, անհայր կամ անմայր, երբեմն երկուքն ալ միասին: Ո՛րք մը: Ուրիշ ի՞նչ կրնան ըլլալ բոլոր անոնք միւս բախտաւորներուն պէս պուտ-պուտ, կարգով-կանոնով չհասունցած, մեծերու շուքին, ճարելով կեանքին բեռը կրելու կարող ուռկանը, ջիղերու ցանցը, զոր մեր անդրանիկ յուզումները կը հիմեն (հիւսել): Ու չունեցան մեզ իրենց կապող, բայց անդարձ ուժով՝ այն զգայնութիւնները, յետոյ զգացումները, որոնք տուն մը, ըսել կ'ուզեմ՝ ընտանիք մը, այսինչ թաղին մասնայատուկ կնիքովը կնքաւոր առարկան կ'ընեն: Հայրենիք գաղափարն ալ ուրիշ տեղէ չի մեկնիր: Ու որք է մեր ժողովուրդը ո՛չ միայն այսօր, այլեւ՝ երէկ, դար մը, դարեր առաջ ալ: Ու որք եր են տակաւին բոլոր արմատախիլ տղաքը, որոնց համար կեանքը տեղէ մը, հողէ մը չի սկսիր: Աւելի ետքը գտայ, որ մեր բոլոր գործիչները, յեղափոխականները կ'իյնային այս նկատումին շառաւիղին: Ո՛րք մը, - պէտք է կրկնել հարցումը, - Մաթիկ Մելիքիսանեանցը: Ուրիշ ի՞նչ կրնար ըլլալ սա երիտասարդը, որ քարայրի մը փորը ինքզինքը կը զգար իբրեւ իր տունին մէջ, մա՛նաւանդ՝ կուշտ էր իրմէ, քանի որ առատ էին իր ամբարները: Աւելի ետքը, այդ օրերէն սանկ քսան մը տարի, ես հանդիպումն ըրի իր նմաններուն, անհուն ճպտուներ, համայնավար, ռամկավար վարդապետութեանց վրայ լայնատարած իրենց բառերով, ժամեր ու ժամեր, երանելի, ինչպէս անսպառ, միշտ վերջին բառին լարած իրենց բոլոր ուժերը, իրաւունքէն, հմտութենէն շատ անդին ինկող սոփեստութեամբ մը, որ չի զարմացներ զիս այսօր: Մաթիկ Մելիքիսանեանցին ամէնէն հեռու յիշատակը իր մանկութենէն (միշտ ալ պիտի հարցնէի մարդկային պատահարը տարօրէն լուսաւորող սա եղերակուռ հարցումը վէպին, ինչպէս իրականութեան մարդերուն, հոն կարդալու յաւակնութեամբ թերեւս ամէնէն անսուտ վկայութիւնը յարափոփոխ պատկերներէ բաղադրուած